Հաստատված է

Պետության և իրավունքի

տեսության և սահմանադրական

իրավունքի ամբիոնի 30. 08. 2022 թ.

նիստում (արձ. թիվ 1)

Ամբիոնի պետ՝ .....

(ստորագրություն)

.....

(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ Սահմանադրական իրավունք 1
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, վճարովի ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն E-mail: pitambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Սաֆարյան E-mail: safamalya@mail.ru, հեռ. 093 57 75 89
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		2-րդ կուրս, 1-ին կիսամյակ

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**5 (հինգ)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«ՀՀ սահմանադրական իրավունք 1» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 126 ժամ, որից 36 դասախոսություն, 28 սեմինար պարապմունք, 62 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում առանց եզրափակիչ գնահատման:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ Սահմանադրական իրավունք 1» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը, սահմանադրության էությունը, տեսակները և ձևերը, սահմանադրակն կարգի հասկացություն, հայկական պետության սահմանադրական բնութագիրը, անձի իրավական կարգավիճակի հիմունքները, ՀՀ սահմանադրաիրավական կարգավիճակը և քաղաքացության ինստիտուտը:
ՆՊԱՏԱԿ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ ՀՀ Սահմանադրության էության և բովանդակության, սահմանադրական կարգի հիմունքների, ՀՀ քաղաքական համակարգի, դրա տարրերի, անձի իրավական կարգավիճակի հիմունքների, սահմանադրաիրավական կարգավիճակի և քաղաքացիության ինստիտուտի վերաբերյալ:

ԽՆԴԻՐ/ՆԵՐ		Դասընթացի խնդիրներն են՝ • Ուսումնասիրել սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդները, գիտությունը, սահմանադրաիրավակն նորմերն ու ինստիտուտները, • ներկայացնել Սահմանադրության հասկացությունը և բնորոշ գծերը, • ուսումնասիրել Սահմանադության հատուկ իրավաբանական բնույթը և էությունը, • ներկայացնել ՀՀ սահմանադրական կարգը, հայկական պետության բնութագիրը, • ուսումնասիրել անձի իրավական կարգավիճակի հիմունքները, • ուսումնասիրել քաղաքացիության ինստիտուտը:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1. տալ ՀՀ Սահմանադրության առարկայի, աղբյուրների, մեթոդների, սկզբունքների, նորմերի, համակարգի, սահմանադրաիրավական հարաբերություն-ների սահմանումը, 2. տարբերել Սահմանադրական իրավունքի, որպես ՀՀ իրավունքի համակարգի առաջատար ճյուղի և գիտության առանձնահատկությունները ՀՀ իրավական համակարգում, 3. ներկայացնել ՀՀ իրավունքի համակարգում ՀՀ սահմանադրության ունեցած տեղը, դերը և նշանակությունը, 4. բացահայտել հասարակական կյանքում ՀՀ սահմանադրական կարգի հիմունքների դերն ու նշանակությունը, 5. սահմանել հայկական պետության բնութագիրը, 6. ներկայացնել պետական իշխանության կազմակերպման հիմունքները, 7. բացահայտել մարդու հիմնական իրավունքների և ազատությունների կառուցակարգերը, անձի իրավական կարգավիճակի հիմունքները, 8. սահմանել ՀՀ քաղաքացիության ինստիտուտը բնութագրիչ տարերը, քաղաքացիության տրամադրման և դադարեցման, կացության կարգավիճակների տրամադրման հիմնական ձևական պահանջները, 9. ընկալել «սահմանադրություն» երևույթի՝ կարևորությունը և նշանակությունը, 10. մատնանշել տնտեսական, սոցիալական և մշակութային ավունքների ու ազատությունների առանձնահատկությունը, 11. վերլուծել ՀՀ քաղաքական համակարգի տարրերից յուրաքանչյուրը, 12. ներկայացնել ՀՀ սահմանադրաիրավական կարգավիճակը, 13. դասակարգել իրավունքների և ազատությունների

		սահմանափակման հիմքերը, 14. բացահայտել մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները, 15. նեկայացնել անձնական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները ու ազատությունները, 16. ներկայացնել իրավունքների և ազատությունների սահմանադրական երաշխիքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. Խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., մաս 1 Երևան, 2016: 2. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Պ507 Հեղ. խումբ; Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.-2 -րդ լրամշակված հրատ.-Եր.:Լուսաբաց հրատարակչատուն, 2016.- 628 էջ: 3. Մուրադյան Մ.Հ. Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր/ Մ.Հ. Մուրադյան. – Եր., Մ992 Ա/Ձ Արման Ասմանգուլյան, 2016 (մաս 1) - 224 էջ: 4. Այվազյան Ն., Այվազյան Ա., Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Երևան, 2005: 2002.
Լրացուցիչ		1. Մ. Մուրադյան Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք (Ընդհանուր մաս): Եր. 2011. 2. Авакьян С.А. Констутиционное право. Энциклопедический словарь. Изд."Норма", М.,2000. 3. Автономов А.С. Констутиционное (государственное) право зарубежных стран. М., 2005. 4. Баглай М.Б. Конституционное право Российской Федерации. М., 2005. 5. Государственное право Германии /издатели: И. Изензее, П. Кирххов/. В 2-х томах, М., 1994. 6. Енгибарян Р.В. Сравнительное конституционное право. М., 2005 7. Енгибарян Р.В. Конституционное развитие в современном мире. М., 2007. 8. Зиновьев А.В. Конституционное право России: проблемы теории и практики. М., 2000. 9. Козлова Е.И.Кутафин О. Е. Констутиционное право России. М., 2006. 10. Конституционное /государственное/ право зарубежных стран /под ред. проф. Страшуна Б. А./. В 4-х томах. Том 1, М., 1993, том 2 М., 1995, том 3, М., 1998. 11. Маклаков В.В. Констутиционное право зарубежных стран (Общая часть). М., 2006. 12. Сравнительное конституционное право /отв. ред. проф. Чиркин В. Е./. М.,
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ		ՈՒսումնական 1-ին կիսամյակի համար ստուգման ձև է

ԵՎ ԿՇԻՌ		նախատեսված դիֆերենցված ստուգարքը
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված» գնահատականների նշանակումով: Գնահատականների չափանիշներն են՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, ունակ է կատարելու վերլուծություններ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ճիշտ է մեկնաբանում սահմանադրա-իրավական նորմերը, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները, չի պատասխանում լրացուցիչ հարցերին. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն և պատասխանել լրացուցիչ հարցերին:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:

Ներկայություն		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Հայաստանի սահմանադրական իրավունքի ճյուղի հասկացությունը և առարկան: Սահմանադրական իրավունքի գիտությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Սահմանադրական իրավունքի հասկացությունը: «Սահմանադրական իրավունք» և «պետական իրավունք» հասկացությունների հարաբերակցությունը: 2. Սահմանադրական իրավունքի առարկան և մեթոդը: Սահմանադրական իրավունքի կողմից կարգավորվող հարաբերությունների (երկու խումբ՝ մարդ-պետություն և պետական իշխանության կառուցվածքը) հիմնարար	Հարցեր 1-7, 10, 11 - անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-7, 10, 11 - սեմինար պարապմունք, խնդրահարույց

բնույթը և նրա կարգավորման մեթոդների (պարտավորեցման, արգելման, թույլատրման, իշխանական-հրամայական) բովանդակությունը: 3. Սահմանադրահիրավական նորմերը և ինստիտուտները: Սահմանադրական իրավունքի նորմերի նմանությունն ու տարբերությունը (բովանդակությամբ, աղբյուրներով, սուբյեկտներով, կառուցվածքով, տեսակներով) իրավունքի այլ ճյուղերի նորմերից: Այդ նորմերի դասակարգումն՝ ըստ բովանդակության, իրավաբանական ուժի, տարածքի, հանձնարարականի բնույթի (լիազորող, պարտավորեցնող, արգելող), նյութականի և ընթացակարգայինի: Սահմանադրահիրավական ինստիտուտների կազմավորման հիմնական չափանիշները և տեսակները: 4. Սահմանադրահիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները: Սահմանադրահիրավական հարաբերությունների առանձնահատկությունները (ունեն՝ սեփական բովանդակություն, սուբյեկտների առանձնահատուկ կազմ, բնութագրվումեն մեծ բազմազանությամբ) և տեսակները (ընդհանուր բնույթի, իրավական վիճակը, մշտական և ժամանակավոր, նյութական և ընթացակարգային): Այդ հարաբերություն-ների կապը իրավաբանական փաստերի հետ: Սահմա-նադրահիրավական հարաբերությունների սուբյեկտների առանձնահատկությունները և տեսակները: 5. Սահմանադրական իրավունքի աղբյուրների (դրանց ձևավորման գործում բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի դերը) տեսակները (նյութական և իրավական): 6. Սահմանադրական իրավունքի համակարգը (սկզբունքները, ինստիտուտները, նորմերը), դրա կապը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համակարգի հետ: 7. Սահմանադրահիրավական պատասխանատվության առանձնահատկությունը և սուբյեկտները: 8. Սահմանադրական իրավունքի տեղը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում: Նրա կապը իրավունքի մյուս ճյուղերի հետ: 9. Սահմանադրական իրավունքի զարգացման հիմնական միտումները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունքի զարգացման (սոցիալականացումը, ժողովրդավարացումը, միջազգայնացումը) միտումները: 10. Սահմանադրական իրավունքի գիտության առարկան, համակարգը և աղբյուրները: 11. Սահմանադրական իրավունքի գիտության մեթոդները: Պատմական, իրավահամեմատական, վիճակագական,	հարցերի քննարկում: Հարցեր 6, 8, 9, 12, 13 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

համակարգային մոտեցման և հետազոտության կոնկրետ-սոցիոլոգիական մեթոդների կիրառության առանձնահատ-կությունները: 12. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի գիտության զարգացումն արդի փուլում: 13. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի դասընթացը:	

Թեմա 2 **ՀՀ Սահմանադրության տեսական հիմունքները** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Սահմանադրության հասկացությունը (նորմատիվ ակտ է, ունի բարձրագույն իրավաբանական ուժ և հատուկ կարգա-վորման առարկա) և հատկանիշները (ընդունվում է ժողովրդի կողմից, նրա անունից, ունի հիմնարար և համա-պարփակ բնույթ), որոնցով տարբերվում է մյուս իրավական ակտերից: 2. Սահմանադրության հատուկ իրավաբանական բնույթը, նրա բարձրագույնիրավաբանական ուժի և այլ իրավական ակտերի նկատմամբ գերակայության բովանդակությունը: Մյուս ակտերի նկատմամբ Սահմանադրության գերա-կայությունը պայմանավորող հանգամանքները: Սահմանադրության և միջազգային-իրավական նորմերի հարաբերակցությունը: 3. Սահմանադրության էությունը: Սահմանադրության ծագման բնական անհրաժեշտությունը և նրա բովան-դակության պատմական զարգացումը: Սահմանադրության էության վերաբերյալ տարբեր մոտեցումները (արևմտյան և մարքսիստական): 4. Սահմանադրության տեսակները և ձևերը: Սահմանադրության դասակարգումը ըստ որոշակի չափանիշների. (կառավարման ձևի, քաղաքական ռեժիմի, կառուցվածքի ձևի, ընդունման կարգի, իրավաբանականի և փաստացիի): Սահմանադրության ներքին և արտաքին ձևերի (կոշտ և ճկուն, համառոտ և ծավալուն, գրված և չգրված) բազմազանությունը պայմանավորող հանգամանքները: Սահմանադրության կառուցվածքի բովանդակությունը: 5. Սահմանադրության գործառնությունները (ֆունկցիաները): Իրավական, քաղաքական և գաղափարական գործառույթների բովանդակությունը:	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Սովորողները նախօրոք ուսումնասիրում են քննարկվող նյութը և ներկայացնում խնդրահարույց հարցերը: Հարցեր 1- 7 – սեմինար պարապմունք. Խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 3, 4, 6 – ինքնուրույն աշխատանք: Սովորողները նախապես ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, ուսումնասիրում են Եվրոպական մի քանի երկրների սահմանադրությունների կառուցվածքը, կարգավորման ոլորտները, և համեմատում ՀՀ Սահմանադրության հետ ու ցույց տալիս առանձնա-հատկությունները: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

6. Սահմանադրության գործողությունը ժամանակի մեջ և տարածության վրա: Սահմանադրության նորմերի անմիջական գործողության բովանդակությունը: 7. Սահմանադրությունների ընդունման և փոփոխման կարգը: ՀՀ Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը:	

Թեմա 3 **Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Սահմանադրական կարգի հասկացությունը: Դրա բովանդակության պայմանավորված լինելը Սահմանադրության առաջին գլխում ամրագրված հիմնադրույթներով: Սահմանադրական կարգի միջազգային նշանակությունը: 2. Սահմանադրական կարգի ինստիտուտի տեղը ՀՀ սահմանադրական իրավունքում: Այդ ինստիտուտի նորմերի ազդեցությունը Սահմանադրության մյուս ինստիտուտների ձևավորման վրա:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն : Հարցեր 1-2 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով): Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են տեստային առաջադրանքներ:

Թեմա 4 **Հայկական պետության սահմանադրական բնութագիրը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ինքնիշխան պետություն: Ինքնիշխանության իրավաբանական բովանդակության դրսևորման ձևերը (պետական իշխանության գերակայություն, միասնություն և անկախություն):	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում սովորողների կողմից ներկայացված

2. Ժողովրդավարական պետություն: Պետության ժողովրդավարական բնույթի դրսևորման եղանակները (քաղաքացիական հասարակության առկայություն, իշխանության պատկանելը ժողովրդին, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովում, իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացում): 3. Սոցիալական պետություն: Սոցիալական պետության բնորոշ գծերը (աշխատանքի իրավունք, տնտեսության իրացում, նվազագույն կենսամիջոցների ապահովում): 4. Իրավական պետություն: Իրավական պետության բնորոշ գծերը (իրավունքի կամ օրենքի գերակայություն, փոխադարձ պատասխանատվության ապահովում, իշխանությունների բաժանում): 5. Աշխարհիկ պետություն: Աշխարհիկ պետության բնորոշ գծերը, որոնցով այն տարբերվում է կղերական բնույթի պետություններից:	խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք: Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):

Թեմա 5 **Պետական իշխանության կազմակերպման հիմունքները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իշխանության պատկանելը ժողովրդին: Ժողովրդաիշխանության սկզբունքի ծագումն ու զարգացումը: Ժողովրդի ինքնիշխանության և պետական ինքնիշխանության հասկացությունն ու հարաբերակցությունը: Ժողովրդաիշխանության և ժողովրդավարության սկզբունքների հարաբերակցությունը և դրա նենգափոխման վնասակար հետևանքները: 2. Ժողովրդաիշխանության իրացման ձևերը: Անմիջական ժողովրդաիշխանության տեսակները: Հանրաքվեի հասկացությունը և տեսակները (պարտադիր, ֆակուլտատիվ, պլեբիսցիտ), սուբյեկտները, առարկան և իրավաստեղծ նշանակությունը: Հանրաքվեի նշանակումը բացառող հանգամանքները: Ժողովները, հանրաքվեները, երթերը և ցույցերը որպես անմիջական ժողովրդաիշխանության օժանդակ ձևեր: Ազատ ընտրությունների սկզբունքի բովանդակությունը: Ժողովրդաիշխանության ներկայացուցչական ձևերը (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ): Խորհրդարանի և Նախագահի միջոցով իշխանության մյուս թևերի նկատմամբ ժողովրդի	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են հաջորդ դասախոսության և սեմինար պարապմունքի ժամանակ: Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

վերահսկողության բովանդակությունը: 3. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Դրա բովանդակությունը, ծագումն ու զարգացումը: Իշխանությունների տարանջատման սկզբունքի դրսևորման առանձնահատկությունները կառավարման տարբեր ձևերի դեպքում:	

Թեմա 6 **ՀՀ սահմանադրաիրավական կարգավիճակը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. ՀՀ տարածքը: 2. ՀՀ պետական լեզուն: 3. ՀՀ պետական խորհրդանիշները: 4. ՀՀ մաքսային, դրամական և հարկային համակարգերը: 5. ՀՀ-ը միջազգային հարաբերությունների համակարգում:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում սովորողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով): Հարց 5 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ:

Թեմա 7 **Տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային հարաբերությունների** **սահմանադրական հիմունքները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Տնտեսական հարաբերությունների սահմանադրական հիմունքները: Տնտեսական հարաբերությունների հասկացությունը և ենթարկվելը տնտեսական օբյեկտիվ օրենքներին: Պետության դերը տնտեսական	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Սովորողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույ-

հարաբերությունների կարգավորման գործում: Սեփականության ձևերի դերը տնտեսական հարաբերությունների ձևավորման գործում: Տնտեսական հարաբերությունների սկզբունքները: Աշխատանքի իրավունքի դերը տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում: 2. Սոցիալական հարաբերությունների սահմանադրական հիմունքները: Սոցիալական համակարգի հասկացությունը, կառուցվածքն ու բովանդակությունը: Սոցիալական հավասարության սկզբունքի իրականացումը: Ընտանիքի հիմնախնդիրը սոցիալական հարաբերությունների համակարգում: 3. Հոգևոր-մշակութային հարաբերությունների սահմանադրական հիմունքները: Հոգևոր-մշակութային հարաբերությունների իրավական կարգավորման Առանձնահատկությունները: Գիտության, կրթության և կրոնի դերը անձի հոգևոր զարգացման և դաստիարակության առաջընթացի խնդրում: Եկեղեցու և պետության փոխհարաբերությունների իրավական կարգավորումը: 4. Մասնավոր սեփականության իրավունք: 5. Աշխատանքի ընտրության ազատության և աշխատանքային իրավունքներ: 6.Սոցիալական ապահովության իրավունք: 7.Կրթության իրավունք:	թներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննակման: Հարցեր 1-7 սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 8 **Մարդու և քաղաքացու սահմանադրահիրավական կարգավիճակը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը և դրա վրա ազդող հանգամանքները (քաղաքացիությունը, հիմնական իրավունքներն, ազատություններն ու պարտականությունները, գործունակությունը, սոցիալական վիճակը): 2. Մարդու և քաղաքացու իրավական վիճակի սկզբունքները (իրավունքների, ազատությունների և պարտականությունների համընդհանուր լինելը, հավասա-ությունը (իր երեք դրսևորումներով), անօտարելիությունը): 3. Սահմանադրական իրավունքների, ազատությունների և	Հարցեր 1-7 - Դասախոսություն՝ սովորողների ակտիվ ներգրավմամբ, խմբային քննարկման ձևով: Հարցեր 1-7 - ինքնուրույն աշխատանք. Սովորողները ծանոթանում են դասագրքի նյութերին և հանձնարարված այլ գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են դասախոսությունների ընթացքում:

պարտականությունների հասկացությունը և բովանդակությունը: Մարդու հիմնական (սոցիալ-տնտեսական, քաղաքական, անձնական) իրավունքների սահմանադրական ամրագրման օբյեկտիվ բնույթը՝ (որպես անձի և պետության գոյության պայմանի): Սահմանադրական իրավունքների և ազատությունների բնորոշ գծերը, որոնցով դրանք տարբերվում են իրավունքի այլ ճյուղերի նորմերով կարգավորվող իրավունքներից: 4. Օտարերկրացիների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Կացության ժամանակավոր, մշտական, հատուկ կարգավիճակների սուբյեկտները և առանձնահատկությունները: 5. Մարդու իրավունքների միջազգային իրավական հիմքերը: Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային նորմերի արտացոլումը ներպետական օրենսդրության մեջ: 6. Իրավունքների և ազատությունների սահմանափակման հասկացությունը և հիմքերը: Սահմանափակման ենթակա և սահմանափակման ոչ ենթակա իրավունքները: 7. Իրավունքների և ազատությունների դասակարգումը: Դասակարգման հիմքերը և չափանիշները (մարդու իրավունքներ և քաղաքացու իրավունքներ, անհատական և կոլեկտիվ): Մարդու իրավունքների դասակարգումը ըստ բովանդակության (անձնական, քաղաքական, սոցիալ-տնտեսական):	Հարցեր 3-6 - անցկացվում է սեմինար պարապմունք. սովորողները քննարկում են մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի ահմանադրաիրավական ամրագրումը, ՀՀ-ում օտարերկրացիների կացության կարգավիճակի օրենսդրական մրագրման վիճակը և փորձում առաջարկություններ ներկայացնել նշված ոլորտները կարգավորող օրենսդրության բարելավման ուղղությամբ: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:
Թեմա 9 **Անձնական իրավունքներ և ազատություններ** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք: Անազատության մեջ գտնվող անձի արժանապատվության պաշտպանության միջոցները: 2. Կյանքի իրավունքը: Մարդու կյանքի իրավունքի պաշտպանության հիմնական ուղղությունները (մահապատժի վերացումը, բնակչության բժշկական սպասարկումը, վերարտադրողական իրավունքը, հանցավորության դեմ պայքարի ուժեղացումը): 3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը և դրա երաշխիքները: Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը: 4. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը. (ոչ պաշտոնական շփումների շրջանակը, հարկադրված	Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Սովորողները նախօրոք ծանոթանում են ներկայացվող իրավունքների վերաբերյալ գրականությանը և օրենսդրական ակտերին, վեր հանում խնդրահարույց հարցերը և ներկայացնում քննարկման: Հարցեր 1-8 սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

կապերը, մարդու ներաշխարհը, ընտանեկան կապերը, կրոնական համոզմունքները և այլն): 5. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Բնակարանի և բնակիչների հասկացությունը; Բնակարան մուտք գործելու իրավունքի սուբյեկտները և պայմանները: 6. Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը: 7. Խղճի և հավատքի (կրոնի) ազատության իրավունքը: Կրոնական կազմակերպությունների ձևավորման կարգը և իրավական վիճակը: 8. Մտքի (արտահայտվելու) և խոսքի ազատության իրավունքը:	

Թեմա 10 **Քաղաքական իրավունքներ և ազատություններ** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Միավորվելու իրավունք: 2. Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք: 3. Տեղեկատվության ազատության իրավունք: 4. Պետության կառավարմանը մասնակցելու իրավունք:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Սովորողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննակման: Հարցեր 1-4 սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում

Թեմա 11 **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ և ազատություններ** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մասնավոր սեփականության իրավունք: 2. Աշխատանքի ընտրության ազատություն և աշխատանքային իրավունքներ: 3. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: 4. Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք: 5. Արժանապատիվ գոյության և նվազագույն աշխատավարձի իրավունք: 6. Ամուսնության և ընտանիք կազմելու իրավունք:	Հարցեր 1,2,5,7,9 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Սովորողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննակման:

Մայրության և մանկության պաշտպանությունը: 7. Սոցիալական ապահովության իրավունք: 8. Առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունք: 9. Կրթության իրավունք: 10. Ստեղծագործության ազատության իրավունք: 11. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:	Հարցեր 1,2,5,7,9 - սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ: Հարցեր 3,4,6,8,10,11 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը:

Թեմա 12 **Իրավունքների և ազատությունների սահմանադրական երաշխիքները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավունքների և ազատությունների երաշխիքների հասկացությունը և բովանդակությունը: 2. Իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետության պարտականությունն է: 3. Իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը: 4. Իրավունքների և ազատությունների միջազգային իրավական պաշտպանությունը: 5. Իրավաբանական օգնության և պաշտպան ունենալու իրավունքը: 6. Անմեղության կանխավարկածը: 7. Օրենքի հետադարձ ուժի արգելումը:	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Սովորողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույ-թներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննակման: Հարցեր 1-7 սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:

Թեմա 13 **Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քաղաքացիության հասկացությունը: Պետության և	Հարցեր 1-8 - անցկացվում է

քաղաքացու միջև կապերի բնույթը (իրավական և կայուն, անձին որպես քաղաքացի ճանաչելը, փոխադարձ իրավունքները և պարտականությունները): Հպատակությունը և անձին չհանձնելը: 2. ՀՀ քաղաքացիության սկզբունքները: Քաղաքացիության ընդհանուր (արյան և հողի իրավունքի) և մասնավոր (իրավահավասարության, կամավորության, քաղաքացիությունից զրկելու անթույլատրելիության, բացառիկության, արտասահմանում ապրողների քաղաքացիության պահպանման, ազգությամբ հայերի քաղաքացիության ձեռքբերման պարզեցվածության, ամուսնու քաղաքացիության մեխանիկական ձեռքբերման մերժման) սկզբունքների բովանդակությունը: Երկքաղաքացիության բազմաքաղաքացիության) միջազգային իրավական և ներպետական խնդիրները: 3. ՀՀ քաղաքացիության ձեռքբերման հիմքերը (ծնունդը, քաղաքացիության ճանաչումը, ստանալը, վերականգնվելը, խմբակային ձեռքբերելը, այլ հիմքեր) և կարգը ըստ ՀՀ քաղաքացիության մասին օրենքի: 4. ՀՀ քաղաքացիության դադարեցումը: Դրա հիմքերը (դուրս գալը, այլ պետության քաղաքացիություն ընդունելը) և կարգը: Քաղաքացիությունից դուրս գալուն խոչընդոտող հիմքերը: Քաղաքացիությունից զրկելը որպես բացառիկ միջոց: 5. Երեխաների քաղաքացիության որոշման կարգը: Երեխաների քաղաքացիության որոշման դեպքում երեխայի շահերի հաշվառումը: 6. Քաղաքացիության վերաբերյալ գործերի լուծման կարգը: Այդ գործընթացին մասնակցող մարմինների (ՀՀ Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովը, նրա աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչությունը, կառավարությունը, ՀՀ ոստիկանությունը, արտաքին գործերի նախարարությունը և դիվանագիտական ծառայությունները) պարտականությունները: 7. Փախստականների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Փախստականի կարգավիճակ ստանալու կարգը: Փախստականի կարգավիճակ ստանալու դիմումի մերժումը և դրա գանգատարկման կարգը: 8. Քաղաքական ապաստանի իրավունքը և իրացման եղանակները: Դիվանագիտական ապաստանի ինստիտուտը:	դասախոսություն: Հարցեր 1-8 – սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 1-8 - ինքնուրույն աշխատանք. սովորողները նախօրոք ծանոթանում են քաղաքացիության վերաբերյալ գործերի լուծման կարգին և փորձում են կազմել քաղաքացիության մեջ ընդունվելու և դուրս գալու վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև փախստականի կարգավիճակ ձեռք բերելու վերաբերյալ փաստաթղթերը: Ծանոթանում են քաղաքական ապաստանի և դիվանագիտական ապաստանի ինստիտուտներին: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:

Հարցաշար

«ՀՀ սահմանադրական իրավունք 1» առարկայի դիֆերենցված ստուգարքի

1.Սահմանադրական իրավունքի հասկացությունը: «Սահմանադրական իրավունք» և «պետական իրավունք» հասկացությունների հարաբերակցությունը:

2. Սահմանադրական իրավունքի առարկան և մեթոդը:

3. Սահմանադրահիրավական նորմերը և ինստիտուտները:

4. Սահմանադրահիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները:

5. Սահմանադրական իրավունքի աղբյուրների տեսակները:

6. Սահմանադրական իրավունքի համակարգը, դրա կապը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համակարգի հետ:

7. Սահմանադրահիրավական պատասխանատվության առանձնահատկությունը և սուբյեկտները:

8. Սահմանադրական իրավունքի տեղը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում:

9. Սահմանադրական իրավունքի զարգացման հիմնական միտումները:

10. Սահմանադրական իրավունքի գիտության առարկան, համակարգը և աղբյուրները:

11. Սահմանադրական իրավունքի գիտության մեթոդները:

12. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի գիտության զարգացումն արդի փուլում:

13. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի դասընթացը:

14. Սահմանադրության հասկացությունը և հատկանիշները:

15. Սահմանադրության հատուկ իրավաբանական բնույթը:

16. Սահմանադրության էությունը:

17. Սահմանադրության տեսակները և ձևերը:

18. Սահմանադրության գործառնությունները (ֆունկցիաները):

19. Սահմանադրության գործողությունը ժամանակի մեջ և տարածության վրա: Սահմանադրության նորմերի անմիջական գործողության բովանդակությունը:

20. Սահմանադրությունների ընդունման և փոփոխման կարգը:

21. Սահմանադրական կարգի հասկացությունը:

22. Սահմանադրական կարգի ինստիտուտի տեղը ՀՀ սահմանադրական իրավունքում:

23. Ինքնիշխան պետություն:

24. Ժողովրդավարական պետություն:

25. Սոցիալական պետություն:

26. Իրավական պետություն:

27. Աշխարհիկ պետություն:

28. Իշխանության պատկանելը ժողովրդին:

29. Ժողովրդաիշխանության իրացման ձևերը:

30. Ժողովրդաիշխանության ներկայացուցչական ձևերը:

31. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը:

32. Անձի իրավական կարգավիճակի հասկա¬ցությունը:

33. Մարդու և քաղաքացու իրավական վիճակի սկզբունքները:

34. Սահմանադրական իրավունքների, ազատությունների և պարտականությունների հասկացությունը և բովանդակությունը:

35. Օտարերկրացիների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում:

36. Մարդու իրավունքների միջազգային իրավական հիմքերը:

37. Իրավունքների և ազատությունների սահմանափակման հասկացությունը և հիմքերը:

38. Իրավունքների և ազատությունների դասակարգումը:

39. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք:

40. Կյանքի իրավունքը:

41. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը և դրա երաշխիքները:

42. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը

43. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը:

44. Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը:

45. Խղճի և հավատքի (կրոնի) ազատության իրավունքը:

46. Մտքի (արտահայտվելու) և խոսքի ազատության իրավունքը:

47. Միավորվելու իրավունք:

48. Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք:

49. Տեղեկատվության ազատության իրավունք:

50. Պետության կառավարմանը մասնակցելու իրավունք:

51. Քաղաքացիության հասկացությունը:

52. ՀՀ քաղաքացիության սկզբունքները:

53. ՀՀ քաղաքացիության ձեռքբերման հիմքերը և կարգը ըստ ՀՀ քաղաքացիության մասին օրենքի:

54. ՀՀ քաղաքացիության դադարեցումը::

55. Քաղաքացիության վերաբերյալ գործերի լուծման կարգը:

56. Փախստականների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում:

57. Քաղաքական ապաստանի իրավունքը և իրացման եղանակները: